ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

N << ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/02>> ԾԱԾԿԱԳՐՈՎ **_''Խմելու ջրագծերի կառուցման և ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների''** ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Իջևան << 28 >> մարտի 2025թ.

Ժամը 11:00

Մասնակցում էին.

Միսակ Մելքումյան - Հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

Անդամներ՝ Աղաբեկ Գալստյան-Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Սիրանուշ Չիբուխչյան- Հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Աննա Մանգասարյան-Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

1. <<ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/02>> ծածկագրով **_''Խմելու ջրագծերի կառուցման և ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների'** ձեռքբերման մրցույթի հրավերի վերաբերյալ 27.03.2025թ. ստացվել է հարցում.

<<Հարգելի Պատվիրատու,խնդրում եմ տրամադրել պարզաբանում,թե որ օրենքով և օրենքի որ կետով է նախատեսվում Ձեր կողմից հրապարակված մրցույթի լիցենզիայի 1-ին դասի պահանջը,այն դեպքում,երբ Ձեր կողմից հրապարակված մրցույթին ՀՀ Իջևանի համայնքապետարանի կողմից տրվել է 3-րդ ռիսկայնության աստիճանի՝ թիվ 386,378 նախագծման թույլտվությունները,իսկ Ձեր կողմից նշված ՀՀ ՔԿՆ 06.12.23թ. թիվ 15-Ն հրամանը կարգավորում է լիցենզիաների ստացումը և պատասխանատու մասնագետի հավաստագրման անցումային կարգը:>>

Ի պատասխան ներկայացվում է պարզաբանում ստորև.

Լիցենզիայի դասերը և դրանց ներկայացվող պահանջները սահմանված են համապատասխան իրավական ակտերով, որոնց ընտրությունը կատարում է Պատվիրատուն ելնելով տվյալ օբյեկտների նոր կառուցվող լինելու հանգամանքից, աշխատանքների բարդությունից, ռիսկայնությունից, բնակավայրերի ներսում աշխատանքներ լինելու հանգամանքից, տվյալ աշխատանքների նախագծողի գրավոր դիրքորոշումից. Ընդորում, տվյալ օբյեկտները 3-րդ աստիճանի ռիսկայնության են, որոնք հանդիսանում են միջինից բարձր ռիսկայնության (ռիսկայնության աստիճանները 5-ն են՝ ցածր (I), միջին (II), միջինից բարձր (III), բարձր (IV) և բարձրագույն (V)- ՀՀ կառավության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշում):

Նիստին ներկա հանձնաժողովի անդամները.

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Մելքումյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գալստյան

Ս. Չիբուխչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան